ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Վ. Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Մարդկանց աշխատանքային գործունեության բնագավառի ուսումնասիրության նկատմամբ վերջին 10—15 տարիների ընթացքում սովետական սոցիոլոգների, տնտեսագետների և փիլիսոփաների հետաքրքրության բուռն աճը պայմանավորված է մեր երկրում կոմունիստական շինարարության սոցիալական պրակտիկայի պահանջներով, սոցիալիստական աշխատանքի զարգացման տենդենցների, նոր տիպի աշխատավորի ձևավորման և դրանում ներկայումս ծավալվող գիտատեխնիկական հեղափոխության ունեցած դերի վերլուծության անհրաժեշտությամբ։ Զարմանալի չէ, որ եթե 60-ական թվականների սկզբին արդարացի կերպով մատնանշվում էր աշխատանքային գործունեության սոցիոլոգիական պրոբլեմատիկայի անբավարար լուսաբանումը[1], ապա ներկայումս ունենք բազմաթիվ հետազոտություններ՝ նվիրված մարդկային աշխատանքի զարգացմանը գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում[2]։ Սովետական սոցիոլոգները հետաքրքիր աշխատանք են կատարել մասնավորապես սոցիալիստական աշխատանքի՝ կոմունիստականի վերաճման օրինաչափությունների ուսումնասիրության, բանվոր դասակարգի մասնագիտական և որակական կազմի, աշխատանքի նկատմամբ բանվորների վերաբերմունքի, նրանց կուլտուրական և կրթական մակարդակի վրա գիտատեխնիկական հեղափոխության ունեցած ազդեցության հետազոտության ասպարեզում։

Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատանքային գործունեության սոցիոլոգիական վերլուծության մեթոդաբանական հարցերում տակավին վիճելի տեղեր կան, մանավանդ՝ հասկացությունների ապարատի

---

[1] В. П. Рожин, Введение в марксистскую социологию, Л., 1962, стр. 75.

[2] «Технический прогресс и вопросы труда при переходе к коммунизму», М., 1962; «Рабочий класс и технический прогресс», М., 1965; «Труд и развитие личности», Л., 1965; «Человек и его работа», М., 1967; «Социальные проблемы труда и производства. Советско-польское сравнительное исследование», Москва—Варшава, 1969; «Социальные исследования», вып. 3; проблемы труда и личности, М., 1970; Б. Д. Бреев, Технический прогресс и структура рабочих кадров, М., 1963; А. М. Вейнберг, Влияние технического прогресса на характер труда, М., 1964; Р. И. Чочиев, Влияние автоматизации производства на характер труда рабочих, М., 1966; С. С. Товмасян, Труд и техника, Ереван, 1965; А. А. Зворыкин, Наука. Производство. Труд, М., 1965; Р. И. Косолапов, Коммунистический труд: природа и стимулы, М., 1968; В. Г. Подмарков, Социальные проблемы организации труда, М., 1969; Г. Н. Черкасов, Социология труда и профсоюзы, М., 1970; В. Я. Суслов, Социология труда. Теоретические и методологические проблемы, Л., 1971; Г. В. Бадеева, Социальные проблемы труда в коммунистическом строительстве, М., 1972; Л. С. Бляхин, О. И. Шкаратан, НТР, рабочий класс, интеллигенция, М., 1973; И. И. Чангли, Труд. Социологические аспекты теории и методологии исследования, М., 1973.

օգտագործման հարցերում։ Սրա հիմքում, թվում է, ընկած է աշխատանքի ուսումնասիրության սոցիոլոգիական մոտեցման էության ոչ լրիվ պարզված լինելը։

Մարդկանց աշխատանքային գործունեությունը հետազոտման օբյեկտ է բազմաթիվ գիտությունների համար, որոնցից յուրաքանչյուրը (աշխատանքի էկոնոմիկա, աշխատանքի ֆիզիոլոգիա, աշխատանքի հիգիենա, աշխատանքային իրավունք, արտադրության էսթետիկա և այլն) ունի այդ սոցիալական բարդ ֆենոմենի դիտարկման իր յուրահատուկ տեսանկյունը, այլ կերպ ասած՝ առանձնացնում է ուսումնասիրության իր ուրույն առարկան։ Այս «աշխատանքային» գիտությունների ներկա զարգացումը պահանջում է աշխատանքային պրոբլեմատիկային կոմպլեքսային, ամբողջական մոտեցում։ Այդպիսին է և սոցիալական պրակտիկայի պահանջը. այնպիսի արդիական պրոբլեմներ, ինչպիսիք են, օրինակ, աշխատանքի վերածումը անհատի առաջին կենսական պահանջի կամ գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը անհատի և նրա գործունեության զարգացման վրա, շոշափում են մարդկային աշխատանքի ոչ թե առանձին կողմերը, այլ նրա բուն էությունը, հանդես են գալիս որպես մարդկանց միջև տնտեսական, հոգեբանական, բարոյական և այլ հարաբերությունների հանգուցակետեր, ուստի և չեն կարող լուծվել աշխատանքի մասին նշված «մասնավոր» գիտությունների շրջանակներում։

Հասկանալի է, որ կոմպլեքսային մոտեցումը (որը ժամանակակից գիտության առավել բնութագրական հատկանիշներից է) չի կարող ապահովվել և այդ գիտությունների արդյունքների սոսկ ընդհանրացումով։ Ներկայումս որոշ հետազոտողներ որպես աշխատանքի մասին կոմպլեքսային գիտություն (կամ աշխատանքի ընդհանուր տեսություն) առաջ են քաշում աշխատանքի սոցիոլոգիան։

Աշխատանքային գործունեության սոցիոլոգիական տեսության, ինչպես նաև գիտության սոցիոլոգիայի, ընտանիքի սոցիոլոգիայի, կրթության սոցիոլոգիայի և մյուս, այսպես կոչված «հատուկ սոցիոլոգիական տեսությունների» զարգացումը վերջին ժամանակներս սոցիոլոգիական իմացության մասնագիտացման արդյունքն է։ Սրանց ծագումը պայմանավորված է մարքսիստական սոցիոլոգիայի զարգացման անհրաժեշտությամբ և, փաստորեն, այդ զարգացման ձևն է, քանի որ, ինչպես ներկայումս ընդունված է գրականության մեջ, «պատմական մատերիալիզմի ընդհանուր հասկացություններից կոնկրետ ուսումնասիրության անցնելու համար անհրաժեշտ են որոշ միջնորդավորող տեսական օղակներ, այսինքն՝ մասնավոր սոցիոլոգիական ընդհանրացումներ և տեսություններ»[3]։ Դրանք սակայն նման անցման համար ստեղծված «ինչոր զուտ արհեստական օժանդակ միջոցներ չեն», այլ «արտացոլում են սոցիալական ամբողջի ռեալ, օբյեկտիվորեն գոյություն ունեցող մակարդակները»[4]։ Աշխատանքի հատուկ սոցիոլոգիական տեսությունը՝ մարդկանց աշխա-

---

[3] Д. М. Угринович, О предмете марксистской социологии (сб. «Очерки методологии познания социальных явлений». М., 1970, стр. 12).

[4] Г. М. Андреева, Е. П. Никитин, Метод объяснения в социологии (сб. «Социология в СССР», М., 1965, т. 1, стр. 142). Տե՛ս այդ մասին նաև՝ «О структуре марксистской социологической теории» (материалы дискуссии, М., 1970), Ա. Մ. Էկմալյան, Մարքսիստական սոցիոլոգիայի կառուցվածքը և կոնկրետ սոցիոլոգիական հետազո-

տանքային գործունեության մասին սոցիոլոգիական դիտելիքի համակարգը, հենց կոչված է ֆունկցիոնալ կերպով ծառայելու իբրև յուրատեսակ կամուրջ մարդու աշխատանքի ընդհանուր սոցիոլոգիական ըմբռնման և կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների միջև։ Այս սոցիոլոգիական գիտությունը ինքն ունի հիերարխիկ կառուցվածք, որը համապատասխանում է նրա արտացոլած բաղմակառուցվածքային ֆենոմենին։

Գիտության մասին դատելը անհրաժեշտաբար ենթադրում է այնպիսի հարցերի պարզաբանում, ինչպիսիք են գիտության առարկայի, նույն օբյեկտն ուսումնասիրող գիտությունների հետ նրա հարաբերակցության, ինչպես նաև այդ գիտության հիմնական սկզբունքների և հասկացությունների ապարատի, նրա ճանաչողության մեթոդի և մեթոդիկայի հարցերը։

Գիտության ցանկացած ճյուղի ձևավորման անհրաժեշտ նախադրյալն այդ գիտության առարկայի սահմանումն է, այսինքն նրա գիտական հետաքրքրությունների շրջանակի առանձնացումը։ Տվյալ գիտության «ֆոկուսում» հայտնվող կոնկրետ պրոբլեմների թվարկումով հնարավոր է տալ գիտության առարկայի ծավալուն սահմանումը։ Այդպես է վարվում, օրինակ, Գ. Ն. Չերկասովը, առանձնացնելով հարցերի հինգ խումբ, որոնք «իրենց ամբողջությամբ կազմում են աշխատանքի սոցիոլոգիայի առարկան»[5]։ «Նման սահմանման դեպքում հեղինակի առաջարկած հարցերի շրջանակը այնքան լայն է, որ այն դուրս է գալիս նման պրոբլեմատիկայով զբաղվող գիտությունների ողջ համախմբի տեսական վերլուծության սահմաններից, ընդգրկում է ձեռնարկությունների տնտեսական քաղաքականության և պրակտիկ գործունեության հարցերը»։ Վ. Յա. Սուսլովը գրում է. «Աշխատանքի սոցիոլոգիայի առարկան արտահայտում է օբյեկտի այն կողմերը, հատկությունները, այն օբյեկտիվ իրականությունը, որի հետ գործ ունի սոցիոլոգը։ Այդ իրականությունը գծագրվում է նրա գործունեությամբ, գիտությամբ լուծվող պրոբլեմներով, աշխատանքի սոցիոլոգիայի՝ օբյեկտի տվյալ կողմերն ու հատկություններն արտացոլող տարբեր տեսական կառույցներով, հատուկ մոտեցմամբ, մեթոդներով, պրոբլեմների լուծման համար անհրաժեշտ հետազոտական միջոցներով։ Աշխատանքի սոցիոլոգիայի ռեալ գոյությունն ու զարգացումը արտահայտող ողջ այս համախումբը բացահայտում է նրա առարկայական իրականությունը»[6]։ Ակնհայտ է, սակայն, որ ինչպես գիտության մեթոդները, այնպես էլ նրա «տեսական կառույցները» որոշվում են նրա իսկ առարկայի բնույթով, այլ կերպ ասած՝ բերված սահմանումը նույնպես չի պարզաբանում աշխատանքի սոցիոլոգիայի առարկան (քանզի այն պարզապես հանգեցնում է նրան, ին-

---

տությունները։ Կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանության և մեթոդիկայի հարցեր, Երևան, 1973։

Անհրաժեշտ է նկատել, որ ընդհանուր պլանով դեռ անբավարար չափով է պարզված հատուկ սոցիոլոգիական տեսությունների և հասարակական գիտությունների, ինչպես նաև հենց իրենց՝ այդ տեսությունների փոխհարաբերության հարցը։ Բավականին մշուշապատ է, օրինակ, աշխատանքի սոցիոլոգիայի և արդյունաբերության սոցիոլոգիայի կամ, այսպես կոչված՝ «արտադրական կոլեկտիվի սոցիոլոգիայի» ուսումնասիրության առարկաների սահմանազատումը (А. К. Назимова, О. И. Шкаратан, Курс лекций по социологии промышленности. Л., 1971).

[5] Г. Н. Черкасов, նշվ. աշխ., стр. 31—34.

[6] В. Я. Суслов, նշվ. աշխ., стр. 32.

չով պետք է զբաղվի հետազոտողը)։ Եվ չի էլ կարելի հակադրել սահմանման երկու ձևերը. արդեն կոնկրետ պրոբլեմների թվարկման մեջ ներառված է սոցիոլոգիական գիտության հավակնությունը, այդ պրոբլեմների «սոցիոլոգիական» լինելը։ Ուստի պետք է բացահայտել հենց այն չափանիշը, որով այս կամ այն պրոբլեմը դասվում է սոցիոլոգիական պրոբլեմների շարքը։

Աշխատանքի հետազոտման սոցիոլոգիական ասպեկտը կապված է նրա ծագման, սոցիալական էության, սոցիալական ֆունկցիաների, ինչպես հասարակական ողջ օրգանիզմի գործառնության և զարգացման, այնպես էլ մարդկային անհատի ձևավորման պրոցեսում աշխատանքային գործունեության գերի ուսումնասիրության հետ։ Սոցիոլոգիական տեսանկյունով մարդկանց աշխատանքային գործունեությունը հանդես է գալիս ոչ որպես մեկուսացված երևույթ, այլ հասարակության սոցիալական կառուցվածքի հետ սերտ առնչության մեջ, որպես մի ավելի ընդհանուր համակարգի՝ մարդկային հասարակության բաղկացուցիչ տարր։ Այս կապակցությամբ աշխատանքի սոցիոլոգիան դիտարկում է և աշխատանքի կառուցվածքային կազմը իբրև հարաբերականորեն ինքնուրույն մի ամբողջություն, երևան է հանում նրա «ինքնաշարժման» իմանենտ օրինաչափությունները։

Ասվածից պարզ է, որ սոցիոլոգիական «տեսադաշտում» են աշխատանքային գործունեության ոչ բոլոր կողմերն ու կապերը, այլ՝ սոցիոլոգիական օրինաչափությունները։ Այսպես, աշխատանքային պրոցեսում անհատի հոգեկան հատկությունների ձևավորման պրոբլեմը պատկանում է աշխատանքի հոգեբանության իրազեկությանը, այսինքն՝ աշխատանքի սոցիոլոգիան ամենևին էլ չի կարող իրենով փոխարինել աշխատանքի մասին մնացած բոլոր գիտությունները։ Հիմնվելով վերջիններիս արդյունքների վրա, հանդիսանալով այս առումով ամբողջացնող, ընդհանրացնող դիսցիպլին, աշխատանքի սոցիոլոգիան «ընդհանուր» է այնքանով, որքանով որ նա ուղղված է այն ընդհանուր օրինաչափությունների բացահայտմանը, որոնց ենթարկվում է մարդկային աշխատանքը որպես ուրույն սոցիալական երևույթ։ Ակներև է, որ աշխատանքային գործունեության տնտեսական, հոգեբանական, իրավական և այլ կողմերը անհնարին է միասնության մեջ ըմբռնել առանց աշխատանքի սոցիալական բնույթի, նրա սոցիալական դերի մասին ընդհանուր պատկերացման։ Մարդկային կեցության բոլոր կողմերի հետ աշխատանքային գործունեության փոխադարձ կապի, աշխատանքի սոցիալական պայմանավորվածության շնորհիվ է հենց, որ աշխատանքի վերածումը անհատի առաջին կենսական պահանջմունքի կամ գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում աշխատողի անհատականության զարգացումը հատկապես սոցիոլոգիական պրոբլեմներ են։

Պարզ է նաև, որ սոցիոլոգիական պրոբլեմների ցանկացած խմբավորումը չի կարող լինել սպառիչ և աշխատանքի սոցիոլոգիայի առարկայի պարզաբանման տեսակետից ոչինչ չի կարող տալ, քանզի ակնհայտ է, որ ոչ մի ինքնին «ոչ սոցիոլոգիական» պրոբլեմ (շնորհիվ աշխատանքային գործունեության վերլուծությանը սոցիոլոգիական մոտեցման առանձնահատկության) աշխատանքի ոլորտում լինել չի կարող։ Օրինակ՝ այնպիսի զուտ տնտեսական երևույթ, ինչպիսին է աշխատավարձը կամ զուտ հոգեբանական երևույթ, ինչպիսին է բանվորի հոգնածությունը, կարող են դառնալ սոցիոլոգիական վեր-

լուծության առարկա, մի բան, որ չի կարելի ասել մյուս «աշխատանքային» գիտությունների մասին։ Աշխատավարձի ուսումնասիրությունը կլինի սոցիոլոգիական, եթե այն դիտվի իր սոցիալական ֆունկցիաների տեսակետից (տնտեսական, հոգեբանական, խթանող, շարժառիթային և այլն), աշխատողի հասարակական և աշխատանքային ուղղվածության, միջանհատային հարաբերությունների վրա վարձատրության սիստեմի գործած ազդեցության պլանով։ Նշենք այստեղ, որ աշխատանքի նկատմամբ մարդու վերաբերմունքի բազմաթիվ հետազոտություններ, որոնք ներկայացվում են իբրև սոցիոլոգիական, իրականում մնում են հոգեբանական գիտության սահմաններում, քանի որ այդ պրոբլեմը մեկուսի վերցրած (յուրահատուկ օրինաչափությունները իրենց հարաբերական ինքնուրույնությամբ) հոգեբանական պրոբլեմ է (և մշակվում է սոցիալ-հոգեբանական կոնցեպցիաների շրջանակներում՝ շարժառիթային տեսություն, նպատակային ուղղվածության տեսության, անհատի արժեքային կողմնորոշման տեսություն)։ Հետևաբար աշխատանքի տեսությունը, «որը պետք է պատասխանի այն հարցին, թե ինչ օրենքների է ենթարկվում մարդու վերաբերմունքը աշխատանքին»[7], դեռ սոցիոլոգիական տեսություն չէ։

Իսկական սոցիոլոգիական վերլուծությունն այն է, երբ ուսումնասիրությունը ուղղված է բացահայտելու աշխատանքի նկատմամբ մարդու վերաբերմունքի սոցիալական էությունը, այսինքն՝ նրա էությունը որպես մարդկանց միջև հոգեբանական, բարոյական, տնտեսական և այլ հարաբերությունների բարդ հանգույց, երբ այդ վերաբերմունքը դիտվում է հասարակական հարաբերությունների համակարգում, մյուս սոցիալական ենթահամակարգերի հետ նրա փոխադարձ կապի տեսանկյունից։

Սոցիոլոգիական պրոբլեմների «հոգեբանականացումը» բուրժուական աշխատանքի սոցիոլոգների առավել բնորոշ գիծն է և հետևանք է նրանց ընդհանուր մեթոդաբանական դիրքորոշման աշխատանքի սոցիոլոգիայի առարկայի հարցում։ Այսպես, ֆրանսիացի սոցիոլոգների ֆունդամենտալ հետազոտությունում՝ «Աշխատանքի սոցիոլոգիայի տրակտատում», այն դիտվում է «որպես ուսմունք իրենց տարբեր ասպեկտներով վերցրած մարդկային բոլոր ընդհանրությունների մասին, որոնք կազմավորվում են աշխատանքի առիթով»[8]։ Սակայն այդ «մարդկային ընդհանրությունները» ուսումնասիրության առարկա են ոչ միայն սոցիոլոգիական, այլև մյուս հասարակական գիտությունների համար։ Սոցիոլոգիայի՝ իբրև մարդկային խմբերի, մարդկանց միջև հարաբերությունների մասին գիտության սահմանումը առհասարակ բնորոշ է բուրժուական սոցիոլոգիային[9]։ «Ստացվում է,— իրավացիորեն նշում է Գ. Վ. Օսիպովը,— որ սոցիոլոգները պետք է զբաղվեն մարդկանց միջև փոխհարաբերությունների բոլոր ձևերով», որը, սակայն, «ցանկացած գիտության ուժերից վեր է»[10]։ Բացի այդ, «նման սոցիոլոգիայի գոյությունը ինքնանակեր

---

7 «Социологические исследования и их роль в научной организации труда. Материалы всесоюзного симпозиума», М., 1968, стр. 14.

8 „Georges Friedmann, L'objet de la sociologie du travail.—Traite de sociologie du travail", V. I, Paris, 1961, p. 26.

9 Г. В. Осипов, Современная буржуазная социология (критический очерк), М., 1964, стр. 58—64.

10 Նույն տեղում, էջ 59։

մարդկանց փոխհարաբերությունները հետազոտող մնացած բոլոր գիտությունների վերացում»[11]։ Ընդսմին, այդ փոխհարաբերությունների համախմբում ֆրանսիացի սոցիոլոգները շրջանցում են դրանց հիմքը՝ արտադրական հարաբերությունները։ Արդյունքում դրանք մեկուսացվում են հասարակական ամբողջից, մինչդեռ, ինչպես վերջինս, այնպես էլ «նրա բաղկացուցիչ տարրերից յուրաքանչյուրն իր հերթին օժտված է օրգանական ամբողջականության հատկանիշով՝ հանդես գալով հասարակության նկատմամբ իբրև ենթահամակարգ, իսկ որոշ այլ կառուցվածքային տարրերի նկատմամբ իբրև համակարգ»[12]։

Բացառիկ ուշադրություն հատկացնելով մարդկանց փոխհարաբերությունների հոգեբանական կողմերին, ֆրանսիացի աշխատանքի սոցիոլոգները, ըստ էության, հրաժարվում են իրոք սոցիոլոգիական հետազոտությունից, սոցիոլոգիայի ճանաչողության մեթոդի առանձնահատկությունից, այն է՝ նրա կոմպլեքսային բնույթից, «որ պայմանավորված է հասարակական օբյեկտների ուսումնասիրության սոցիոլոգիական ասպեկտի յուրահատկությամբ»[13]։ Հասկանալի է, թե ինչու բուրժուական սոցիոլոգների կողմից նույնիսկ իսկապես կարևոր պրոբլեմների հետազոտությունները (օրինակ՝ տարիքային, սեռական և այլ տարբերությունների ազդեցությունը աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման, ժամանցի անցկացման վրա) անխուսափելիորեն դատապարտվում են մակերեսայնության, էմպիրիզմի, քանզի հետազոտողները հաշվի չեն առնում արտադրության միջոցների նկատմամբ ունեցած մարդկանց հարաբերությունները։ Դրան է նպաստում նաև ընդհանուր սոցիոլոգիական տեսության բացակայությունը, ինչպես նաև այդ հետազոտությունների խիստ կիրառական բնույթը։

Աշխատանքի սոցիոլոգիայի ֆրանսիական դպրոցի մասին այստեղ ասվածը միանգամայն կիրառելի է և անգլո-ամերիկյան սոցիոլոգիայի նկատմամբ[14]։ Բացահայտելով աշխատանքի վերաբերյալ անգլո-ամերիկյան սոցիոլոգների տարբեր կոնցեպցիաների գաղափարական ուղղվածությունը, նրանց մեթոդաբանական թերությունները, Օ. Ն. Ժեմանովը իրավացիորեն ընդգծում է, որ, ի տարբերություն դրանց, «մարքս-լենինյան սոցիոլոգիայում հասարակական կյանքում աշխատանքի վիճակի ու դերի սոցիալական հետազոտություններին հատուկ է տեսության և էմպիրիկ նյութի օգտագործման օրգանական միասնությունը»[15]։ Միաժամանակ հեղինակը նախազգուշացնում է, որ «սոցիոլոգիական հետազոտությունների կոնկրետ ուղղությունների անջատումը և առանձնացումը մարքս-լենինյան սոցիոլոգիայում չի կարող լինել այնչափ լրիվ, որ կարելի լինի խոսել ընդհանուր սոցիոլոգիական տեսությունից դուրս, առանձին գոյություն ունեցող «մասնավոր սոցիոլոգիաների» մասին»։ Այստեղից սակայն հեղինակը եզրակացնում է, թե «կարելի է ընդունել ոչ թե առանձին աշխատանքի սոցիոլոգիայի, այլ աշխատանքի սոցիալական պրոբլեմների ուսումնասիրությունների առկայությունը»։ Այս տարօրինակ դրույթը (ուր նույնացվում են «սոցիալական» և «սոցիոլոգիական» հետազոտությունները

11 Նույն տեղում։

12 Ա. Մ. Էկմալյան, նշվ. աշխ., էջ 22—23։

13 Նույն տեղում, էջ 40։

14 О. Н. Жеманов, Критика англо-американской социологии труда (курс лекций), Свердловск, 1972.

15 Նույն տեղում, էջ 131։

ները) հիմնավորվում է նրանով, թե «մարքսիստ սոցիոլոգների կողմից աշխատանքի սոցիալական պրոբլեմների հետազոտությունները, որոնք լայնորեն ծավալվել են վերջին 3—5 տարիներին, կրում են կոնկրետ բնույթ»[16]։ Եվ հակասելով իր իսկ պնդմանը (տեսության և էմպիրիկ նյութի օգտագործման օրգանական միասնությունը այդ հետազոտություններում) հեղինակը հայտարարում է. «Ինքնուրույն աշխատանքի սոցիոլոգիայի ընդունումը տանում է տեսության և կոնկրետ ուսումնասիրությունների որոշ խզվածության թույլտվության և կարող է հանգեցնել աշխատանքի ուսումնասիրման մեջ էմպիրիզմի գերակշռության։ Նմանօրինակ պնդման օգտին որպես վկայություն կարող է ծառայել թեկուզ արտադրության տեխնիկական կողմերի վերլուծությամբ սոցիոլոգների տարածված հափշտակվածությունը՝ ի վնաս աշխատանքի սոցիալական պրոբլեմների հետազոտության»[17]։

Սակայն հազիվ թե եղած թերությունները բավարար հիմք են նման պընդման համար։ Աշխատանքի սոցիոլոգիայի գոյության «օգտին է վկայում» հրապարակում արդեն եղած տեսական-մեթոդաբանական բնույթի գրականությունը[18]։ Բացի այդ, հետազոտությունների «կոնկրետ բնույթը» չպետք է թյուր կարծիք ստեղծի մարքս-լենինյան աշխատանքի սոցիոլոգիայի՝ որպես գիտության ճանաչողական դերի վերաբերյալ։ Այսպես, մարդու աշխատանքի մասին բոլոր վերը նշված գիտությունները ծագել են իբրև անմիջական պատասխան հասարակական պրակտիկայի, բուռն կերպով զարգացող մեքենայական արդյունաբերության պահանջների, աշխատանքային գործունեության մեքենայացմանը։ Այս դիսցիպլինների ծագումն ու արագ զարգացումը վկայում էին մարդկանց աշխատանքի նկատմամբ հասարակության ուշադրության աճի մասին, սակայն դա ավելի շատ կիրառական բնույթի հետաքրքրություն էր։ Աշխատանքի հոգեբանությունը, օրինակ, սահմանվում է որպես հոգեբանության ճյուղ, որն ուսումնասիրում է մարդու հոգեբանությունը «աշխատանքային գործունեության ժամանակ, աշխատանքի արտադրողականության բարձրացման և անհատի՝ մասնագիտորեն կարևոր հատկությունների ձևավորման նպատակներով»[19]։ Մինչդեռ վիճելի է թվում այն կարծիքը, թե «աշխատանքի սոցիոլոգիայի հիմնական նպատակն է՝ հետևելով նրա օբյեկտիվ տրամաբանության զարգացմանը, նպաստել միջոցառումների այնպիսի համակարգի մշակմանը, որը կարողանա ապահովել աշխատանքի կազմակերպման օպտիմալ ձևեր, նրա արտադրական և սոցիալական բարձր արդյունավետություն»[20]։ Այստեղ չափից ավելի ընդգծված է աշխատանքի սոցիոլոգիայի կիրառական նշանակությունը, բացի այդ, դա ավելի շուտ մեկ այլ, միանգամայն որոշակի դիսցիպլինի, այն է՝ աշխատանքի գիտական կազմակերպման խնդիրն է։

---

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, էջ 132։

18 И. И. Чаигли, Некоторые методологические вопросы социологии труда («Вопросы философии», 1967, № 1); В. Я. Суслов, նշվ. աշխ.; Г. Н. Черкасов, նշվ. աշխ., «Человек и его работа»; И. И. Чаигли, Труд. Социологические аспекты теории и методологии исследования.

19 Н. Д. Левитов, Психология труда, М., 1963, стр. 9.

20 В. Я. Суслов, նշվ. աշխ., стр. 51.

Գիտատեխնիկական հեղափոխության արդեն ներկա փուլը զարգացած սոցիալիզմի պայմաններում հնարավորություն է ընձեռում աշխատանքի սուբյեկտին դիտել ոչ թե որպես միջոց, այլ հասարակության տնտեսական զարգացման նպատակ։ Ուստի, հասկանալի պիտի լինի, որ դեպի ապագան ուղղված այս սոցիոլոգիական գիտության համար ծագող պրոբլեմները ունեն ոչ միայն պրակտիկ-կիրառական, այլ առավել տեսական արժեք։

Աշխատանքի սոցիոլոգիայի արմատական հարցը, աշխատանքի բնագավառում սոցիոլոգիական հետազոտությունների վերջնական նպատակը դեռևս Կ. Մարքսի կողմից նշված աշխատանքի վերաճման պրոցեսի ուսումնասիրությունն է. արտաքին անհրաժեշտությունից՝ անհատի առաջին կենսական պահանջի, կենսամիջոցից՝ կոմունիստական հասարակարգի յուրաքանչյուր անդամի կենսագործունեության նպատակի, նրան հայտնի հաճույքներից բարձրագույնի։ Այս հիմնական պրոբլեմի շուրջն են խմբավորվում ներկայումս լայնորեն ուսումնասիրվող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը աշխատանքի բովանդակության և բնույթի, աշխատողի բազմակողմանի զարգացման, աշխատանքի նկատմամբ նրա վերաբերմունքի, ֆիզիկական և մտավոր աշխատանքի ապագայի վրա և այլն։

Աշխատանքի սոցիոլոգիայի զարգացման ներկա վիճակի համար հատկանշական է այն, որ այդ սոցիոլոգիական պրոբլեմներից յուրաքանչյուրի ուսումնասիրության մեջ բացակայում են պարզորոշ սահմանված «բանվորական» հասկացությունները։

Աշխատանքի սոցիոլոգիան որպես սոցիոլոգիական գիտելիքի հարաբերականորեն ինքնուրույն մի համակարգ հիմնվում է մարդկանց աշխատանքային գործունեության ընդհանուր սոցիոլոգիական ըմբռնման, պատմական մատերիալիզմի սկզբունքների և կատեգորիաների ապարատի վրա։ Սակայն ընդհանուր սոցիոլոգիական տեսության հասկացությունները հասարակագիտությանը մատչելի առավելագույն ընդհանրացման վերացարկումներ են, ուստի և աշխատանքի սոցիոլոգիան պետք է մշակի իր սեփական հասկացությունների ապարատը, որը հնարավորություն կտա հետազոտել աշխատանքային գործունեության ոլորտի զարգացման օրինաչափությունները, նրա սեփական կառուցվածքը (ինչը չի մտնում պատմական մատերիալիզմի՝ որպես ընդհանուր սոցիոլոգիական տեսության խնդիրների մեջ)։ Անշուշտ, հենց այդպիսի կատեգորիալ ապարատի բացակայությունն է շատ սոցիոլոգների ստիպում մինչ էմպիրիկ հետազոտությունների ձեռնարկումը զբաղվել իրենց ուսումնասիրության հիմնական հասկացությունների պարզաբանմամբ։ Այսպես, լենինգրադյան սոցիոլոգների «Մարդը և նրա աշխատանքը» գրքում աշխատանքի՝ անհատի առաջին կենսական պահանջմունքի վերաճման պրոցեսի կոնկրետ սոցիոլոգիական ուսումնասիրությանը նախորդում է հետևյալ հասկացությունների սահմանումը. «աշխատանքի բնույթ», «աշխատանքի բովանդակություն», «վերաբերմունք աշխատանքի նկատմամբ»[21]։ Կամ՝ «աշխատանք-աշխարհայացք» համակարգի վերլուծությունը հեղինակը ստիպված է սկսել հասկացությունների սահմանմամբ՝ «աշխատանքի բովանդակություն», «աշխատանքի բնույթ», «աշխատանքի ձև», «ֆիզիկական աշխատանք», «մը-

[21] «Человек и его работа», стр. 14—41.

տավոր աշխատանք» և այլն[22]։ Սակայն առայժմ, ինչպես այս, այնպես և սոցիոլոգիական աշխատանքներում գործող շատ այլ հասկացությունների նկատմամբ միանգամայն իրավացի է «ձև» կատեգորիայի կիրառման մասին արված դիտողությունը. «Հաճախ այն օգտագործում են, երբ ուզում են ասել մի այնպիսի բանի մասին, որի նշանակման համար չեն կարողանում ընտրել մի այլ ավելի ճշգրիտ և սպեցիֆիկ արտահայտություն»[23]։

Հասկանալի է, որ «բանվորական» հասկացությունների տահմանումը ինքնանպատակ չէ, դա ընտրված պրոբլեմի տրամաբանական վերլուծության առաջին քայլն է։ Այս պրոբլեմն ունի ոչ միայն կարևոր գործնական, այլև ինքնուրույն տեսական արժեք, քանզի ցանկացած տեսական համակարգը՝ դա նրա հասկացությունների համակարգն է, ուստի դրանց կատեգորիալ սահմանումները ցանկացած գիտության ձևավորման անհրաժեշտ պայմանն են։

Ինչպես նշեցինք վերը, աշխատանքի բնագավառը հետազոտվում է բազմաթիվ գիտությունների կողմից, որոնցից յուրաքանչյուրը կառուցում է իր հասկացական ապարատը՝ համաձայն մարդկային աշխատանքի վերլուծության իր ուրույն ասպեկտի։ Ուստի, ինքնին զարմանալի չէ միևնույն ֆենոմենի տարբեր արտացոլումը զանազան գիտությունների հասկացություններում և, հետևաբար, միևնույն տերմինի մեջ տարբեր բովանդակությունների ներդրման հնարավորությունը։ Եվ այն դեպքում, երբ բավարար կերպով պարզված չէ տվյալ գիտության ճանաչողական խնդիրների առանձնահատկությունը, նշված հնարավորությունը արդեն հղի է մեկ գիտությունից մյուսին կատեգորիաների չհիմնավորված «դիֆուզիայի» վտանգով։ Ասվածը թույլ է տալիս համաձայնվելու Վ. Յա. Ելմեևի հետ, որը գրականության մեջ լայնորեն տարածված «աշխատանքի տեխնիկական բաժանում», «մարդկանց տեխնիկական հարաբերություններ» հասկացությունները դասում է «մարդկային աշխատանքի պրոցեսների բացատրության համար տեխնիկական հասկացությունների կիրառման փորձերին»[24]։ «Աշխատանքի տեխնիկական բաժանում» տերմինը Գ. Վիլմոշին ևս «սոցիոլոգիական պլանով ներկայանում է որպես ոչ գիտական»[25]։ Հնարավոր է, որ այս եզրակացությունները մի փոքր կտրուկ են, սակայն այս փաստը ևս մի վկայություն է աշխատանքի սոցիոլոգիական հետազոտության բավարար կերպով մշակված հասկացությունների համակարգի բացակայության։ Մյուս կողմից, եթե նկատի ունենանք աշխատանքային գիտությունների համակարգում աշխատանքի սոցիոլոգիայի գրաված տեղը, իրավացի պետք է համարել այն կարծիքը, թե հենց սոցիոլոգիական «լեզվի» օգնությամբ է, որ մենք ի վիճակի ենք համադրել աշխատանքի մասին մասնավոր գիտությունների արդյունքները[26]։ Մինչդեռ առայժմ, մենք կարող ենք արձանագրել հակառակ փաստը, այն է՝ սոցիոլոգիական աշխատանքներում այլ գիտությունների հասկացությունների առկայությունը՝ առանց դրանց

---

22 В. Ф. Беспальчий, Взаимодействие труда и мировоззрения (автореферат докторской диссертации), Киев, стр. 6—8.

23 В. В. Агудов, Категория «форма» и «структура», М., 1970, стр. 17.

24 В. Я. Ельмеев, Коммунизм и развитие человека как производительной силы общества, М., 1964, стр. 57.

25 Г. Вильмош, Категория «труд» и разделение труда как социологические категории, М., 1967, стр. 128.

26 В. Я. Суслов, *նշվ. աշխ.*, стр. 34.

որևիցե հիմնավորման սոցիոլոգիական գիտության շրջանակներում։ Բացի այդ, կիրառվող հասկացական ապարատի գերի թերագնահատումը, ելակետային հասկացությունների պարզորոշ սահմանման բացակայությունը կասկածի տակ են առնում մի շարք հեղինակների տեսական և գործնական հետևությունների արժեքը։ Արդյոք իմացաբանական մե՞ծ արժեք ունեն աշխատանքի վրա գիտատեխնիկական հեղափոխության ունեցած ազդեցության վերաբերյալ մեր գրականության մեջ խիստ տարածված հետևյալ «հետևությունները». աշխատանքի բովանդակության հարստացում (աղքատացում), աշխատանքի ստեղծագործական բնույթի (բովանդակության) ուժեղացում, աշխատանքի բարդացում, աշխատանքի հեշտացում և այլն։ Գիտական հետազոտության կուլտուրայի բարձր մակարդակի օգտին չի խոսում և այն դրությունը, երբ միևնույն երևույթը, այսպես կոչված «աշխատանքի ինտելեկտուալացումը», այսինքն մարդու աշխատանքային գործունեության մեջ մտավոր, ստեղծագործական տարրերի աճը որոշ սոցիոլոգներ համարում են աշխատանքի բովանդակության փոփոխություն[27], մյուսները՝ աշխատանքի բնույթի փոփոխություն[28]։ Բազմաթիվ հեղինակներ այս երկու հասկացությունները օգտագործում են որպես նույնական (ընդսմին առանց դրանց հոմանիշության որևէ հիմնավորման), երբեմն նույնիսկ զույգ կատեգորիաների տեսքով՝ «աշխատանքի բնույթը և բովանդակությունը»[29]։

Սոցիոլոգիական հասկացությունների կատեգորիալ սահմանման, աշխատանքի սոցիոլոգիայի հասկացական ապարատի կառուցման խնդիրը գրականության մեջ լայնորեն քննարկվում է 1965 թ. սկսած[30] և, չնայած արդեն

---

27 Б. Д. Бреев, նշվ. աշխ.; Ю. С. Поспелов, Влияние интеллектуализации труда на работника материального производства при социализме (автореферат кандидатской диссертации), М., 1971; Е. Г. Куделин, Превращение труда в первую жизненную потребность—объективная необходимость общественного прогресса (автореферат докторской диссертации), Л., 1971; В. Ф. Беспальчий, նշվ. աշխ.։

28 Д. А. Парфенов, Умственный и физический труд в СССР. М., 1964; В. А. Ляхович, Современный научно-технический прогресс и закономерности изменения характера труда (автореферат кандидатской диссертации), Киев, 1971.

29 В. Д. Исупов, Изменение характера и содержания труда рабочих под влиянием технического прогресса («Научные труды Дальневосточного гос. ун.-та», т. 7, часть 2. Серия общественных наук, Владивосток, 1964); Г. Ф. Комаров, В. П. Полозов, Автоматизация и преодоление старого разделения труда (сб. «Труд и развитие личности», Л., 1965); А. Г. Здравомыслов, В. А. Ядов. Влияние различий в содержании и характере труда на отношение к труду (сб. «Опыт и методика конкретных социологических исследований», М., 1965); А. А. Зворыкин, նշվ. աշխ.; Н. В. Марков, Научно-техническая революция: анализ, перспективы, последствия, М., 1972.

30 «Рабочий класс и технический прогресс» (сборник), М., 1965; И. Н. Чангли, Некоторые методологические вопросы социологии труда; В. Г. Прытков. Изменение условий и характера труда в процессе коммунистического строительства (автореферат кандидатской диссертации), М., 1966; В. Я. Суслов, О социологическом понимании содержания и характера труда («Философские науки», 1969. № 6); В. И. Перфильев, Общественно-историческая обусловленность категории «характер труда» («Научные труды Иркутского гос. ун.-та», т. 49. Серия научного коммунизма, вып. 2, Иркутск, 1969); В. П. Коноплева, О сущности категорий «содержание» и «характер труда» («Вестник МГУ», серия VII—экономика, 1972, № 2; И. М. Рогов, Влияние научно-технической революции на изменения в характере и содержании труда (сб. «Проблемы исторического материализма», вып. 3, Л., 1973).

եղած ուսումնասիրություններին, այդ հասկացությունների մեկնաբանման մեջ դեռ բացակայում է միասնությունը։ Ակնհայտ է, որ այս պրոբլեմի հաջող լուծման անհրաժեշտ պայմանը սոցիոլոգիական վերլուծության առանձնահատկության պարզաբանումն է։

К ВОПРОСУ О СПЕЦИФИКЕ СОЦИОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ТРУДА

В. А. МИРЗОЯН

Резюме

Сложный социальный феномен—трудовая деятельность людей—является объектом исследования множества наук (экономика труда, психология труда, гигиена труда, трудовое право, охрана труда и др.), каждая из которых имеет специфический аспект рассмотрения трудовой деятельности, т. е. выделяет свой специальный предмет исследования. Социологический аспект рассмотрения труда человека связан с выявлением его генезиса, социальной природы, социальных функций, роли и места трудовой деятельности в функционировании и развитии социального целого. В социологическом «видении» сфера труда выступает не как изолированное явление, а соотнесенное с социальной структурой общества в целом, как элемент более общей системы—человеческого общества. В связи с этим социология труда рассматривает структурное строение самого труда как относительно самостоятельной целостности, вскрывает имманентные законы его «самодвижения».